Երկրորդ՝ Յանձնաժողովոյդ են պարտիք ջան ի գործ արկանել վախճան դնելոյ անտեղի դժտութեանց և ընդհարմանց պաշտօնէից դաստիարակութեան համազգի մանկանց յանձնելիք շրջանակս պարտաւորութեանց նոցին և եթէ զոն ինչ թերութիւնք ի հրահանգս կանոնաց թեմական տեսչաց՝ նախընթաց գիտութեամբ Առաջնորդաց սահմանեսցին որոշ կանոնք գործողութեանց՝ իրաւանց և պարտուց նոցին և առաջարկեսցին ի վաւերացումն Մեր։

Երրորդ՝ պարտ ի վերայ Յանձնաժողովոյդ դնի ի միտ առնուլ զամենայն պէտս Ծիսական եկեղեցական ուսումնարանաց Մերոց և փոյթ ունել մեծապէս հայթայթելոյ հնարս առ ապահովութիւն վիճակի համայն արժանաւոր դաստիարակաց և առ բարգաւաճումն ուսումնական և բարոյական յառաջադիմութեան եկեղեցական ուսումնարանացն ըստ արդի պահանջից մանկավարժութեան՝ և զոր ինչ ունիցի յայսմ մասին տնօրինել Յանձնաժողովդ՝ պարբերաբար զեկուցանել ի գիտութիւն Մեր և ի բարենկատողութիւն։

Եւ չորրորդ՝ որ ինչ առ յարաբերութիւնս Յանձնաժողովոյդ ընդ այլոց հաստատութեանց՝ պատուիրեմք դմին զամենայն խնդիրս առաջարկեալս ի քննութիւն և ի տնօրինութիւն Յանձնաժողովոյդ մտադիր իքննին առեալ արձանագրել ի կանոնաւոր գումարման ժողովոյ անդամոցդ և յետ կազմելոյ և առաջի առնելոյ զօրագրութիւնս նորին ի հաստատութիւն Մեր՝ տնօրինել զոր ինչ արժանն է մի միայն ընդ ձեռն թեմական առաջնորդաց՝ ընդ որս և եղիցի հանապազ պաշտօնական հաղորդակցութիւն գործին յամենայն ի խնդիրս Ուսումնարանական Վարչութեան։

Մաղթելով ի գլուխ Ձեր և գործակցացդ զօրհնութիւն Յիսուսի երկնաւոր իմամողին մանկանց՝ յարգիւնաւորել ի Ձեզ զգեղեցիկ ակնկալութիւն Մեր՝ միամբ յաւէտ աղօթարար վասն սիրելեալ ազգիս Մերոյ և յառաջադիմութեան նորին և Ձեր՝

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 17 Հոկտեմբերի 1895 ամի
եւ յազգային Թուականութեանս ՌՃԽԴ.
ի Հայրապետութեան Մերում ԺԴ. ամի
Ամենայն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.

Համար 798.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. Քաջալերեցարուք ես եմ... . Կ. Վ. . 359
2. ԱՂՕԹՔԸ Տրտմութեան փարատ. Թարգմ. . . . Պատրիկ. . 370
3. Քրիստոնէական ճարտարապետութեան սկիզբը . . Բարկէն. . 374
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 376
5. Եկեղեցական մամուլը 381

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

6. Բանաստեղծութիւն . . Ե. Յովհաննիսեան 385
7. Մասանեան Տէրութեան պատմութիւն Թ. Նէօլդէքէի... Թարգմ. Ն. Ք. . 385
8. ՄՈՎՍԷՍ Կաղանկատուացւոյ աղուանից պատմութիւն .... (Շարունակելի) Խաչիկ Վ. . 388

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.

9. Մատենախօսութիւն. . Կ. Վ. . . 390
10. Պրոֆ. Փետտէրի հրատարակ. Կ. Վ. . 392
11. Հաւասարակշռութիւն մարմնական եւ հոգեկան աշխատ. Թարգմ. Գ. Ս. . 394
12. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. . Ն. Ք. . . 396
13. Հայ Դասպարը . . Ս. Հայկունի . 397
13. ՄԱՆՐԱՀՈՒՐՔ 361

ԱԶԴԱՅԻՆ.

14. Դպրոցական Վարչութիւն 401

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ . . 402

ՄԱՅՐ ԱԹՈՌ. . . . . .

Հեռագիրներ . . . . . .

1. ՌՈՒՍԱՀԱՅՔ . . . . . .
Երեւանի թեմ . . . . . .
3. ՏՍՇԿԱՀԱՅՔ . . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆԻ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1895 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԻ.

—

ԹՈՒՂԹ ԿՈՐՆԹԱՑՈՑՆ ԱՌ ՊՕՂՈՍ.

Ստեփաննոս և որք ընդ նմա երիցունքն՝ Դաւինոս և Քսենոփն՝ առ Պօղոս եղբայր ողջոյն։ Արք ոմանք Բ. եկին ի Կորնթոս՝ Սիմոն անուն և Կղեմոս՝ որք կործանեցին քաջ քաջ զոմանց հաւատս՝ հրապուրողս և ապականել բանիւք. յորոց բանից վերա դու ինքնին պարտիս հասանել։ Զի